



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-17008**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 107-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/67-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, **Խորհրդի անդամներ՝** Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեծլումյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Արայիկ Ղազարյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

11.07.2017թ-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 305) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.**

21.02.2017թ. Պալատ է մուտքագրվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ, նաև՝ Դատարան**) դատավոր Տաթևիկ Գրիգորյանի (**այսուհետ, նաև՝ Դիմող**)՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 13.02.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**), որում նշվել

է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործի դատական քննության ընթացքում՝ 2014թ. ապրիլի 17-ին որպես ամբաստանյալ Դավիթ Թամրազյանի պաշտպան է ներգրավվել փաստաբան Կրոմվել Գրիգորյանը:

Դատարանը հայտնել է, որ Կրոմվել Գրիգորյանի՝ որպես պաշտպան ներգրավվելուց հետո, մինչև 2015թ. մարտի 9-ը նշանակվել են քսանմեկ դատական նիստեր, որոնցից ինը հետաձգվել են՝ պաշտպան Կ.Գրիգորյանի չներկայանալու պատճառով:

Որոշմամբ նաև նշվել է, որ 2015թ. մարտի 9-ին նշված քրեական գործը վերամակագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ.Գրիգորյանին և ընդունվել է վարույթ: Մինչև 2017 թվականի հունվարի 30-ը գործով նշանակվել է վաթսունհինգ դատական նիստ, որոնցից տասնութը հետաձգվել են՝ պաշտպան Կ.Գրիգորյանի չներկայանալու պատճառով: 2017 թվականի հունվարի 30-ին դատարանի կողմից որոշում է կայացվել՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանական պալատ դիմելու մասին:

Որոշման 2-րդ՝ «Պաշտպանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու առիթը և հիմքը» կետում նշվել է, որ գործի քննության ողջամիտ ժամկետները որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ և հիմնարար իրավական արժեք ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, վերոհիշյալ քրեական գործով դատավարության մասնակիցների հետ համաձայնեցվել և պաշտպան Կրոմվել Գրիգորյանի միջնորդությամբ 2016թ. հուլիսի 11-ի դատական նիստում որոշվել է հիշյալ քրեական գործով դատական նիստերը նշանակել յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 12:30-ին:

Ըստ Որոշման՝ 2017 թվականի փետրվարի 13-ին՝ ժամը 12:30-ին նշանակված դատական նիստում Կրոմվել Գրիգորյանը սկսել է արտասանել իր ճառը, իսկ ժամը 15:14-ին միջնորդություն է ներկայացրել՝ դատական նիստը հետաձգելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ նույն օրը՝ ժամը 16:00, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում պետք է մասնակցի բողոքի քննությանը, իսկ դատարանը, քննարկելով միջնորդությունը, որոշել է այն մերժել՝ նկատի ունենալով, որ հիշյալ քրեական գործով դատավարության մասնակիցների հետ համաձայնեցվել և պաշտպան Կրոմվել Գրիգորյանի միջնորդությամբ դեռևս 2016թ. հուլիսի 11-ի դատական նիստում որոշվել է քրեական գործով դատական նիստերը նշանակել յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 12:30-ին: Հետևաբար, այլ դատարանների վարույթում քննվող գործերով երկուշաբթի օրերին դատական նիստեր նշանակվելու դեպքում պաշտպան Կ.Գրիգորյանը զրկված չի եղել այդ մասին հիշյալ դատարաններին հայտնելու հնարավորությունից: Բացի այդ, Դատարանը գտել է, որ տվյալ քրեական գործը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ուղարկվել է 2013թ. հոկտեմբերի 23-ին, իսկ 2013թ. մայիսի 19-ից

ամբաստանյալ Դ.Թամրազյանը գտնվում է կալանքի տակ: Հետևաբար, տվյալ քրեական գործն ողջամիտ ժամկետում քննելու և ավարտելու անհրաժեշտությունը պայմանավորված է հենց ամբաստանյալ Դ.Թամրազյանի արդար դատաքննության իրավունքի իրացվելիության խնդրով:

Որոշմամբ արձանագրվել է նաև, որ դատարանն առաջարկել է պաշտպան Կ.Գրիգորյանին շարունակել ճառի արտասանումը, սակայն պաշտպան Կ.Գրիգորյանը հայտարարել է, որ լքում է դատական նիստերի դահլիճը: Դատարանը պաշտպան Կ.Գրիգորյանին պարզաբանել է, որ նա իրավունք չունի առանց նախագահողի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը, իսկ Դատարանը նրան թույլ չի տալիս լքել այն: Միևնույն ժամանակ, պաշտպան Կ.Գրիգորյանին առաջարկվել է Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին տեղեկացնել սույն դատական նիստով ծանրաբեռնված լինելու և դատական նիստին ներկայանալու անհնարինության մասին, սակայն ժամը 15:20-ին պաշտպան Կ.Գրիգորյանն առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը:

Դատարանը Որոշման 3-րդ՝ «Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» կետում, վկայակոչելով փաստական հանգամանքները և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը, նույն հոդվածի 5-րդ մասը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետը, գտել է, որ 2017թ. փետրվարի 13-ի դատական նիստի ժամանակ փաստաբան Կ.Գրիգորյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին, անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը 21.02.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր N 305) նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալլատ»:

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, ինչպես նաև չի ներկայացրել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

2017 թվականի մարտի 06-ին Պալատի նախագահի թիվ 38-Ա/ԿԳ-17008 որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ

որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝  
Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով  
(կարգապահական գործ թիվ ԿԳ-17008):

10.03.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ  
Նարինե Սարգսյանին:

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված  
կարգապահական նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել  
դրա օրվա, ժամի և վայրի մասին:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը 05.05.2017թ. ներկայացրել է գրավոր  
բացատրություն: Գրավոր բացատրությամբ Պատասխանողը ներկայացրել է  
առարկություն Դատարանի Որոշման մեջ նշված հանգամանքների վերաբերյալ,  
մասնավորապես նշելով, որ 13.02.2017թ. նշանակված դատական նիստից ժամը 15:20-  
ին հեռանալիս ունեցել է հարգելի պատճառ, որի մասին նախապես տեղեկացրել է  
դատարանին և իր հեռանալով անհարգալից վերաբերմունք չի դրսևորել դատարանի  
նկատմամբ:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված 11.07.2017թ-ին  
կարգապահական նիստին Պատասխանողը պնդել է բացատրությունում նշված  
հանգամանքները, նշելով, որ 13.02.2017թ. ժամը 12:30-ին Երևան քաղաքի Աջափնյակ  
և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում  
նշանակված նիստի ժամանակ՝ դատաքննության սկզբում, խնդրել է Դատարանին,  
որպեսզի նիստը անցկացվի մինչև 15:20, քանի որ պետք է ինքը ներկայանա նույն օրը  
ժամը 16:00-ին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր  
իրավասության դատարանում նախապես նշանակված դատական նիստին, որտեղ իր  
դիմում-բողոքի հիման վրա քննվելու է ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի  
տեղաբաշխման հանձնաժողովի 21.06.2016թ. թիվ 645 որոշումը իր պաշտպանյալ  
Բ.Սողոմոնյանի մասով՝ օրենքի պահանջներին ոչ համապատասխան ճանաչելու  
մասին: Պատասխանողը նշված ժամից առաջ միջնորդությամբ դիմել է Դատարանին  
նիստը հետաձգելու խնդրանքով: Պատասխանողը Դատարանին հայտնել է նաև, որ  
եթե անգամ դատական նիստը շարունակվի միևնույն է ինքը մինչև ժամը 18:00  
պաշտպանական ճառը չի կարող ավարտել, քանի որ այն ծավալուն է: Սակայն  
Դատարանը միջնորդությունը մերժել է:

Պատասխանողը ներկայացրեց թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով 13.02.2017թ-ի դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչը:

### **3.3. Վկաների ցուցմունքները**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2017 թվականի մայիսի 06-ին կազմել է եզրակացություն, որի համաձայն նախապատրաստող անձը գտել է, որ Պատասխանողի գործողություններում առկա չէ 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 12.05.2017թ.: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հուլիսի 11-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով ներգրավված է եղել որպես պաշտպան,

2. թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով 13.02.2017թ. ժամը՝ 12:30-ին նշանակված է եղել դատական նիստ, որի վերաբերյալ ծանուցագիրը փաստաբան Կրոմվել Գրիգորյանը ստացել է 06.02.2017թ.,

3. թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով դատական նիստը նշանակած է եղել 13.02.2017թ., ժամը՝ 16:00-ին, որը նշանակվել է 03.02.2017թ. տեղի ունեցած դատական նիստի ժամանակ:

4. թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով 13.02.2017թ., ժամը՝ 16:00-ին նշանակված դատական նիստը սկսվել է 13.02.2017թ. ժամը 16:13-ին, որին մասնակցել է փաստաբան Կրոմվել Գրիգորյանը:

*Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի Որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ, թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով 13.02.2017թ. ժամը՝ 12:30-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ ծանուցագրի և այն ստանալու փաստը հաստատող հետադարձ ծանուցագրի պատճեններով, թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով 13.02.2017թ. ժամը՝ 16:00-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ ծանուցագրի, 03.02.2017թ. և 13.02.2017թ. դատական նիստերի համառոտագրման պատճեններով, դատական նիստի ձայնային արձանագրությամբ:*

#### **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 11.07.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Կրոմվել Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 03.11.1997թ-ից: 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 19 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (17 ավարտված վարույթ և ն 2 ընթացիկ վարույթ):

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. «Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:»:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին*: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին: Մասնավորապես՝ սույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախազահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը**:

Վերլուծելով վերը նշված կանոնի պահանջը, Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում պարզման ենթակա է հետևյալ հանգամանքները.

**արդյո՞ք Պատասխանողը մինչև Դատարանի կողմից ընդմիջում հայտարարելը առանց նախազահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ:**

Ուսումնասիրելով սույն կարգապահական գործում առկա ապացույցները՝ Պալատի Խորհուրդը հաստատված է համարում, որ **սույն գործով փաստաբան Կրոմվել Գրիգորյանը լքել է դատական նիստերի դահլիճն առանց նախազահողի թույլտվության**:

**Խորհուրդն արձանագրում է, որ նշված վարքագծով փաստաբանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իր պարտականությունների խախտում:**

Անդրադառնալով սույն կարգապահական գործով պարզման ենթակա այն հանգամանքին, թե արդյոք փաստաբան Կրոմվել Գրիգորյանը իր վերոնշված վարքագծով խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը, Խորհուրդը գտնում է, որ **նման խախտում առկա չէ**, քանի որ փաստաբանը իր կամքից անկախ հանգամանքների պատճառով հայտնվել էր մի իրավիճակում, որի պայմաններում երկու դատական նիստերի միջև ժամանակահատվածը կարճ էր և պաշտպանը պարտավոր էր մասնակցել երկու գործերով նիստերին՝ նպատակ ունենալով ոչ թե դատավորի նկատմամբ որևէ բացասական վերաբերմունք ցուցաբերել, այլ՝ մեկ ուրիշ գործով, իր

մեկ այլ վստահորդի օրինական շահերի պաշտպանությունն ապահովել, քանի որ վերջինիս բացակայությունը իր վստահորդի համար կարող էր առաջացնել բացասական հետևանքներ: Նման հանգամանքներում փաստաբանը, ներկայանալով թիվ ԵԱԴԴ/0059/01/13 գործով դատական նիստին, ներկայացրել է միջնորդություն, որում շարադրել է ձևավորված հանգամանքները, և խնդրել է նիստը հետաձգել ու նշանակել մեկ այլ օր, որից հետո ստիպված է եղել լքել դատական նիստերի դահլիճը, մեկ այլ՝ թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով, դատական նիստին մասնակցելու համար, որը նշանակված է եղել ավելի վաղ:

Պալատի խորհուրդը արձանագրում է, որ վստահորդների իրավունքների պաշտպանությունն իրականացնելու նպատակով փաստաբանը փորձել է ապահովել իր ներկայությունը երկու գործերով նշանակված նիստերին: Հատկանշական է այն փաստը, որ թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով նշանակված նիստի սկզբում և դատական նիստերի դահլիճը լքելուց առաջ Կ.Գրիգորյանը հայտնել է թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով նշանակված նիստի մասին և ներկայացրել է թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով նշանակված նիստը հետաձգելու մասին որոշում, և նշված միջնորդությանը միացել է նաև իր պաշտպանյալը՝ ամբաստանյալը և այդ առումով որևէ առարկություն չի ներկայացրել: Հարկ է նկատել, որ փաստաբանի մասնակցությունը թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով նշանակված դատական նիստին խիստ անհրաժեշտ էր, քանի որ այդ նիստով պետք է քննարկվեր իր կողմից ներկայացված դիմում-բողոքը՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի 21.06.2016թ. թիվ 645 որոշումը ի պաշտպանյալի մասով օրենքի պահանջներին ոչ համապատասխան ճանաչելու մասին: Ուստի Խորհուրդը գտնում է, որ վստահորդների իրավունքների պաշտպանությանը միտված փաստաբան Կրոմվել Գրիգորյանի գործողությունները չեն կարող վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու առիթ հանդիսանալ, այն էլ այն դեպքում, երբ փաստաբանը բարեխղճորեն ներկայացրել է դատական նիստին, մասնակցել է նիստին և մյուս գործով դատական նիստին ներկայանալու համար միջնորդություն է ներկայացրել դատարանին:

Խորհուրդն արձանագրում է, որ **թիվ ԵԱԴԴ/0059/01/13 քրեական գործով դատական նիստը չլքելու մասին դատարանի կարգադրությանը չենթարկվելով՝ փաստաբան Կ.Գրիգորյանը դիմել է ծայրահեղ քայլի, որպեսզի իրականացնի թիվ ԵԷԴ/0001/15/17 գործի շրջանակներում իր վստահորդի իրավունքների պաշտպանությունը:**

Խորհուրդն արձանագրում է նաև, որ տվյալ պահին օբյեկտիվորեն բացակայում էր թիվ ԵԷԴ/0001/15/17 գործով կայանալիք նիստը հետաձգելու որևէ հնարավորություն:

Հետևաբար, փաստաբանը գործել է ողջամտության շրջանակներում և ոչինչ չի հուշում, որ նա ունեցել է դիտավորություն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել դատարանի նկատմամբ:

Վերոգրյալը նկատի ունենալով Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի արարքում առկա չեն Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:



Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

**1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17008 կարգապահական վարույթը կարճել:**

**2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան